

232

~~232~~

S-46

1874

17 89

1860
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

W 1350

А. ЕНКАНДРОП. ГОРОДСКАЯ
Цѣна кн. — р. 5 к., пер. 08 к.
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ



Ա. ՏԵՐ ՄԻՔԵԼԵԱՆ

232
5-46

ԳՈՂԱՐՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ


ՔԱՐՈԶՈՒԹԻՆՆԵՐԻՅ

Ա.

(Արտատպած 1893 թ. «Արարատ»ից)

1008
35276

2012



ՎԱԳԱՐՇԱՊԵՏ

ՏԳՈՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅՍ Ս. ԼՁԻԱԾՆԻ

1894 — ՌՅԼԻՍԻ:

11498

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՃՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

5103

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2001

ԳՈՀԱՐՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ

ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ա.

ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Քրիստոսի կենդանացուցիչ քարոզների մէջ նշանաւոր տեղ են բռնում իննը երանութիւններն, որոնք ամփոփ կերպով բովանդատուած են Մատթէոսի աւետարանի Ե. գլխի սկզբում (տես և Ղուկ. Զ. 20—26): Ոմանք համարում են այդ երանութիւնները 7 հատ, ոմանք 8 և 10, որովհետև կարելի է 10, 11, և 12 համարները մէկ կամ երկու կամ երեք երանիներ հաշուել, սակայն ընդհանրապէս յայտնի են դուրս իբրև ինն երանութիւններ: Ղուկասու աւետարանի մէջ կան միայն չորս երանութիւններ, որոնք համապատասխանում են Մատթէոսի 3, 5, 6 և 11 համարներին: Այդ չորս երանութիւններին հակադիր են ճշդիւ և չորս վայեր (Ղուկ. Զ. 24—26):

Իողոր իննը երանութիւնները կազմում են մի գեղեցիկ կարգ, որ սկսում է մարդու ներքին զգացմունքներից ու տրամադրութիւններից և վերջանում նոցա արտաքին յարաբերութեամբ: Դժբա ցոյց են տալիս թէ ինչպիսի դիրք ունինք մենք դէպի Աստուծոյ արքայութիւնն, որից աւելի բարձր բարութիւն չկայ մեզ համար: Եւ քա-

Ա. ՏԵՐ ՄԻՔԷԼԵԱՆ, ԳՈՀԱՐՆԵՐ.

նի որ կեանքը մաքառումն է, և մաքառումը չի կարող յաղթանակ տանել առանց լացի և նեղութիւնների, ի հարկէ երկնքի արքայութիւնն ևս ուրախացուցիչ պոսկ է իսկական բարի մարգկանց, որոնք համբերում են բոլոր նեղութիւններին և յուսով և հաւատով մաքառում են ճշմարտութեան համար: Գիտենք, որ մարգկային ոյժը տկար է և նորա բոլոր աշխատանքները շատ աննշան են երկնային արքայութեան մեծութեան համեմատութեամբ, սակայն մաքառելով աստուածային ճշմարտութեան համար, և կրելով պատահած բոլոր նեղութիւններն ու փորձանքներն, արժանանում ենք այդ բարձր բարիքին, եթէ անխախտ ենք պահում մեր հաւատքն ու յոյսը: Ճշմարիտ հաւատացողին և ճշմարիտ յուսացողին անօգնական չի թողնի Աստուած, այլ կգորայնէ նորան և մեծապէս կըպսակէ նորա յաղթանակը:

«Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեռն»:

Քրիստոս անում էր իւր քարոզութիւնները մեծ մասամբ անապատներում և լեռներում: Նա դէպի այդ կողմն էր տանում իւր յեռանկը եկող ժողովրդին, այնպէս որ մարդիկ հեռանալով գիւղերից և քաղաքներից, մոռանում էին առօրեայ հոգսերն և կարողանում էին առաւել զիւրին կերպով իւրեանց ուշադրութիւնը դարձնել աստուածային իրերի վրայ: Անապատի և մանաւանդ ծովի վրայ մարդ նկատում է իւր ոչնչութիւնն Աստուծոյ անսահմանութեան գիմաց, և խոնարհւում է Նորա վիհութեան առաջ: Հաւատքը դարձնելով, զօրացնում է մարդու հոգին նայն իսկ այդ ժամանակ, երբ մարմինը զգում է իւր տկարութիւնը: Այնուհետեւ հոգին սուղւում է աստուածային խորհրդների մէջ, սնունդ առնում և զօրանում: Իսկ լեռների բարձրութիւնից նայելով դէպի երկրի մեծ տարածութիւնը, ներշնչւում է մարդ հոգեւոր վայելչութեամբ, տեսնում է հոգու աչքով երկնային արքայութիւնն և սոսկում մարգկային խիտերից: Հոգեւոր այգալիսի վիճակումն է, որ մարդու մարմինը ընկղմւում է նորա հոգու խոր բովի մէջ և զուում սնուի կրքերից ու ձգտումներից: Այդ հոգեւոր վերանորոգումը զօրաւոր էր լինում առաւել և անհամեմատ մեծապէս, երբ մարդկանց վրայ ներգործում էին և Փրկչի փրկական խօսքերը: Քրիստոս-

սին ծանօթները գիտէին այս, ուստի «և իբրեւ նոտաւ անդ՝ մտաւեան առ նա աշակերտք նորա»: Հարկաւ ժողովուրդն էլ մօտիկ կանգնելով, ողջանում էր փրկական քարոզին:

«Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա և ասէր»:

Ժողովուրդը մօտենում էր Փրկչին, վրան զի նորա ներկայութիւնը միշտ փրկարար էր նորա համար, այլ և Քրիստոսի բերանից էին ասանում կենաց կերակուրն և բժշկւում այն կերակրի մահարար աղբեղութիւնից, որ ստացել են օձի բերանից ելած խօսքին լսելով: Քրիստոս սաւանց խօսքի էլ բժշկում էր նոցա՝ իսկ խօսքով վառւում էր նոցա հոգին և կենդանացնում: Նորա խօսքը կենդանութեան հօր էր տկարացող հոգիների համար և շիջուցանող ջուր էր վնասակար հուրը հանգչնելու համար: Եւ այս անգամ ինն երանութիւններն է անելու, նա պատուիրում է ոչ թէ հրաժարիլ չարիքից, ապաշխարել և այլն, որոնք տարրական առաքինութիւններ են, այլ բարձրագոյն առաքինութիւններն է յիշում ինն աստիճանով: Հոգեւոր են այս երանութիւնները, վրան զի հոգեւորը բարձր է մարմնաւորից և յաւիտենական, սակայն մարմինը զօրանում է հոգու ամրութիւնից, այնպէս որ այս երանութիւններից անմասն չէ և ճշմարիտ բարի մարդու մարմինը: Այդպէս էլ պէտք է լինէր, որովհետեւ Քրիստոս Փրկիչ էր հոգիների և մարմինների միանգամայն:

«Երանի ազքատաց հոգեւոր զի նոցա է արքայութիւն երկնից»:

Մինչդեռ Քրիստոսի հաւատացողները նորա չուրջը ժողովուած՝ երանութեան մէջ էին զգում ինքեանց, լսում են ահա մի շարք երանութիւններ, որոնք ձեռք են բերւում Նորան հաւատալով և սրտանց հետեւելով երանութիւն է բոլոր բարիքների անապատ գումարումն, որի մէջ լինելով մարդ այլ ևս ոչ մի կարիք չէ զգում և իրաւ առաւել երանութիւն չի կարելի երեւակայել, քան երկնային արքայութիւնը: Իսկ գորա հակառակն է թշուառութիւնն, որ վիճակն է երկրային միակողմանի կեանքի, սոսկ մարմնաւոր ձրգտումների: Բացարձակ երանութիւն վայել է միայն Աստուծոյ

ուստի Պօղոս երանելին և միայն Հօրն (1 Տիմ. 2. 15) ասում է Ամենակալին:

Երանութեան մէջ էր մարդս իւր սկզբնական վիճակում — դրախտում — սակայն ընկնելով նա մեղքի մէջ և ամբարտաւանանալով, կորցրեց իւր երանական պատկերն ախտերի մէջ և զրկուեց երանութիւնից: Փրկիչը եկել էր իւր պատկերն ազատելու համար, նորան լուանալու այդ ախտերից և վերստին դէպի երանութիւն ուղղելու նորան: Վասնորոյ և նկարագրում է այն պատկերն, որ դրախտի մէջ երանական կեանք էր վարում, վայելելով Աստուծոյ ներկայութիւնն ու նմանութիւնը: Եւ իրաւ, առաւել բարձր բարիք չկայ մարդուս համար՝ քան այն, որ ամփոփուած է Քրիստոսի խօսքերի մէջ, թէ՛ «եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. 5. 48):

Քրիստոս նախ երանում է նոցա, որոնք աղքատ են հոգւով, այսինքն որոնք սուղուելով իւրեանց ինքնագիտակցութեան մէջ, խոնարհւում և զգում են որ կարօտ են առաքինութեանց. գորա հակառակն է Յայտն. Գ. 17. «Զի ասես, մեծատուն էի և մեծացայ, և ոչ իւրեք կարօտ եմ: և ոչ գիտեմ թէ դու ես ողորմելի և հեղգ և աղքատ, մերկ և կոյր»: Մինչդեռ հոգով աղքատներին է Աստուած տալիս երկնային բարիք, ինչպէս ասում է մարգարէն. «Տայ... կեանս այնոցիկ, ոյք մաշեալք են սրտիւք» (Ես. 57. 15): Միմիայն հոգով աղքատները կարող են զգալ իւրեանց այն պակասութիւնն, որ լիովին չքանում է երկնային արքայութեան մէջ, վասն զի միայն այդպիսիները կարեն հոգու աչքով տեսնել աստուածային վսեմ անօրէնութեան անհամեմատ իմաստութիւնն և հաւատքով հնազանդուել և առաքինանալ:

Աղքատ կարելի է լինել երկու հանգամանքով. մէկ մեղսական՝ և մէկ առաքինական իրերից: Մեղսականից աղքատանալով, կունենայ մարդ առաքինութեան հարստութիւն, մինչդեռ առաքինութիւնից աղքատանալով՝ կընկնի չարիքների, մեղքերի և յիմարութիւնների մէջ. երկուսն էլ աղքատութիւններ են յարաբերական

4) Սոյն միաբեր երբայեցեքնում «հոգի» բառով է արտայայտուած «չփաշ բուսի»:

իմաստով, սակայն հոգով ճշմարիտ աղքատ՝ ըստ Ս. Գրոց նա է, որ արհամարհում է մեղքերն, և հոգով սրտով կարօտում առաքինութեան և ձգտում աստուածանմանութեան: Նոյն իսկ այս դէպքում կարող ենք և պէտք է նմանինք Քրիստոսին, որ իւր աստուածութեամբ խոնարհուեց մեզ փրկելու համար. կամ ինչպէս ասում է առաքեալը. «Վասն ձեր աղքատացաւ, որ մեծատունն էր» (Բ. Կորն. 8. 9): Ահա այդ կամաւոր խոնարհութիւնն է աղքատութիւն կոչուում և այդ աղքատութեամբ է, որ կարող ենք մօտենալ Փրկչին և գիմել դէպի նորա մեծութիւնը: Կատարեալ խոնարհութիւն անհնարին է հոգեղէններին, սակայն կամաւոր խոնարհութիւնը լիակատար ձգտումն է բոլոր ոյժերի դէպի վսեմն, և այդ է որ գովելի է: Խոնարհութիւնը ամենամեծն է առաքինութիւնների մէջ, որովհետեւ գորա հակառակը հպարտութիւնն է, իսկ հպարտութիւնը, գիտենք, որ հրեշտակներին անգամ ձգեց սատանայի անկման մէջ, երբ նոքա մոռացան իւրեանց արարածական բնութիւնն ու տկարութիւնն, և կամեցան աստուածային անօրէնութիւնից վեր բարձրանալ: Զարիքների հիմը սկսուեց ամբարտաւանութեամբ կամ հպարտութեամբ առաջին մարդուց, և ահա Փրկիչը խոնարհութիւնն է դնում հիմն ամենայն բարիքների: Աւստի և իւրաքանչիւր ոք՝ միշտ աչքի առաջ ունենալով իւր արարածական հոգեղէն բնութիւնը, կյիշէ և հոգեւորի բարձրութիւնն, ու Քրիստոսի փրկչական անօրէնութիւնից օրինակ կառնէ. նա հաւատքով կխոնարհուի Փրկչի առաջ և նորանից կտանայ իւր երանութիւնը: Բայց գորա համար պէտք է նախ զգալ հոգեւորի բարձրութիւնն ու յաւիտենականութիւնը մարմնականից, և երկրաւոր ստացուածքը բարձր չհամարել երկնային արքայութիւնից (Մատթ. 23. 29—34):

Արդ՝ անցական է մարմնաւոր հարստութիւնը, մինչդեռ վսեմ է և մշտական՝ հոգեւոր հոգեւորութիւնը. ուրեմն աղքատանալ հոգով, որպէս զի հարստանալք առաքինութիւններով և հոգեւոր վայելչութեամբ, որոնք երբէք չկարեն գողացուիլ և որոնց պոսկն է երանութիւնը:

« Երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին »:

Հոգւոյ աղքատութեան հետեւում է բնականաբար սգաւորութիւնը, վասն զի քանի որ մարդ՝ գեռ մեղքերի մէջ սուղուած է, չի կարող սգալ, իսկ մեղքերից հեռանալով և ինքնագիտակցութեան գալով միայն կարողանում է զգալ մեղքերի վատ հետեւանքներն և իւր աղքատութիւնը կամ կարօտութիւնը: Ահա այդ ժամանակ ընկնում է նա սգի մէջ և ողբում իւր պակասութիւնները: Եթէ սուգն աշխարհային իրերի վրայ է, մահ կպաւածաւ, մինչդեռ հոգեւոր սուգը տանում է գէպի փրկութիւն (2 Կորնթ. 1, 10): Սուգը յառաջանում է, երբ անգագայութիւնից սթափուում ենք և սկըսում ենք զգալ այն, ինչ որ առաջ չէինք զգում: Ճիշդ այնպէս, ինչպէս որ թմբեցուցիչ դեղով քնացած մարդը վերստին ուշքի գալով, զգում է վիրահատի (սիրութեւ) կտրածների ցաւը և ողբում կամ վշտանում: Իսկ հոգեւոր սուգը լինում է, երբ մարդ եղնում է աշխարհային չարիքների և մեղքերի խորութիւնից և հոգեպէս ուշքի գալիս՝ մի որ և իցէ յաւարար ձայն լսելով: Այդ սուգը նման է վիրահատութեան հետեւող սգին, որից յետոյ արդէն առողջութիւն է: Փրկիչն է այդ վիրահատն, որ եկել է մխիթարել զամենայն սգաւորս (Ես. 40, 2) որոնք սգի մէջ զարգարւում են խոնարհութեան առաքինութեամբ (Սաղմ. 1, 7): Այդպիսի սգաւորներն և համբերողները պէտքէ ժառանգէին աւետեաց երկիրը հին ուխտում (Սաղ. 1, 9, 9: Թն. 1, 7):

Եթէ սոսկ աշխարհային վայելքներն երանական լինէին, դոցա մէջ լոյսացող մարդիկ անշուշտ պէտք է բախտաւոր զգային ինքեանց, սակայն կեանքում տեսնում ենք, որ ամենից շատ նոքան կարօտում հոգեւոր մխիթարութեան, որոնք ամենից հարուստ են երկրայինով: Նա է անմխիթար մնում, ով կուրանալով երկրայինից՝ սրտնում է՝ բայց ժամանակին չէ ըմբռնում հոգեւորի մխիթարական բարձրութիւնը, չէ ողբում անցեալի վրայ, և չէ ձգտում տեսնել այն՝ որ անճառելի է. Այդպիսի վիճակը գրեթէ անասնական է. այդ տեսակ մարդը թաթաւում է երկ-

1 Տե՛ս Ս. Ներսէս Շնորհաւու մեկնութիւնը. Կ. Պոլիս, 1825. էջ 10:

րայինի մէջ և չէ կարենում գլուխը բարձրացնել և տեսնել հանդերձեալ յաւիտենականը, հոգեւոր ճշմարիտ բաղաւորութիւնը: Այդ ժամանակաւոր ուրախութիւն է ինչպէս երազի մէջ¹, որից յետոյ սուգ պէտք է լինի. մինչդեռ երկրային սուգը առհաւատչեալ է հանդերձեալ մխիթարութեան. Այս է ցոյց տալիս մեզ և մեծատան ու Վաղարշոյի պատմութիւնը. (Ղուկ. 1, 20):

Արդ ողբալ պէտք է սոսկ ժամանակաւոր զբաղմունքները, քրնելով անցեալ պատմութիւնն, և աշխատելով ներկայումս լոկ անցականով չբռնուելու: Այս թէ կարող կլինինք մտածել տոտուածայինի վրայ և ձգտիլ՝ հոգւով նորա վեհութեան մէջ աղբելու, որպէս զի հանդերձեալումն ևս ժառանգակից լինինք Քրիստոսի երանութեան: Միայն այդպէս կարող ենք մխիթարական անել մեզ համար, նոյն իսկ մեր ներկայ կեանքը:

Սակայն այդ ամենը համոզիչ կլինի այն մարդուն համար, որ հասկանում է հոգեւոր մխիթարութեան և հանդերձեալ երանութեան բարձրութիւնը, միայն նա կարող է ցաւել, որ ուշագրութիւնը նուիրել է երկրային վայելքների և ժամանակ կորցրել անցականի մէջ, զրկուելով մշտական բարիքներից: Այդ է ճշմարիտ սգաւորը, զա է որ բանդը ձգուած մարդու նման օրէցօր մղկտում է և ձգտում է տեսնել և վայելել արեգակի լոյսը, մինչդեռ կոյրը ձ բանդարկուելով՝ ի՞նչ կարող է գիտենալ լոյսի անսահման բարձրութիւնը:

Ուրեմն կոյր ջլինինք, այլ ընդունելով Ս. Հոգու շնորհը, լինինք ճշմարիտ սգաւորներ, և անձկութիւն զգանք տեսնելու տատուածային լոյսն, որպէս զի միշտ մխիթարուինք:

« Երանի հեղոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր » 3:

Հոգւոյ աղքատութեան և սգաւորութեան՝ անմիջական հետեւո-

1 Անդ. 2 Անդ. էջ 91:

3 Տե՛ս և Ս. Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում: էջ 91: 2 Ս. Գրիգոր Լուսաւորչի ճեպարհը հետեւելով ասորերէն թարգմանութեան՝ դնում է այս կտորը սգաւորներից առաջ:

դուլթիւն է հեղուլթիւնը, «Արք հեղքն են՝ նորա ժառանգեցեն զերկիր» երգւում է և Սաղմոսի մէջ (19, 11): Մինչդեռ հագուլ աղքատութիւնն և սգաւորութիւնը՝ ներքին առաքինութիւններ են, որոնք կապ չունին արտաքին յարաբերութեան հետ. հեղուլթիւնը գլխաւորապէս արտաքին յարաբերութեան մէջ է ճշմարտում: Չարիք գործելու, չարախօսելու և այլ ներգործական ակտերի դեղը՝ հեղուլթիւնն է տալիս. նորա հակառակն է բարկութիւնն, իսկ հեղուլթիւնն է, որ սանձահարում է բարկութեան կրքերն, որոնք խանգարում են մարդկային բանական մտածողութեան ընթացքն, և մարդուն դարձնում մի գազան: Գազանաւորին վիճակի մէջ՝ մարդս այլ ևս չէ կարենում առաքինութիւն գործել, և շեղւում է իւր բռնած և նախապէս որոշած ընթացքից: Եւ չարութիւն և մեղք էլ լինի՝ ծագում է գլխաւորապէս բարկութեան կրքերից. բարկութիւնն է, որ յետ է մղում մարդու մէջ ամենալիսեմ բարոյքները կամ բարի սովորութիւններն ու հակումները: Ուստի և «ճնող հեղութեան՝ խոնարհութիւն է, և արմատ բարկութեան՝ ամբարտաւանութիւն»¹: Ուրեմն խոնարհութիւնը ներքին առաքինութիւն լինելով, հեղութիւն է յառաջ բերում՝ որ ճշգրտում է մարդու յարաբերութիւնը շրջապատողների հետ: Եւ ինչպէս որ ամբարտաւանութեամբ և բարկութեամբ ընկնում է մարդ, վասն զի ուղում է լինել այն՝ ինչ որ չէ, ուստի և խորտակւում է, այնպէս և խոնարհութեամբ և հեղութեամբ բարձրանում է, լինելով այն՝ ինչ որ է իսկապէս: Չգտել ցոյց տալու այն, որ չունինք, խաբէութիւն է և անյաջող կանցնի, վասն զի խաբէութիւնը յարատեւ չէ, և չի կարող ծածկուիլ ոչ մի խորամանկութեամբ. սոյնպէս և հեղութիւնը մի լապտեր է, որ ցոյց է տալիս մարդու առաքինութիւնն և արժանիքն, որոնք միայն առժամանակ չեն երևում խաւարատեալքերին: Շրջապատողների յարաբերութիւնից է կախուած մարդու երջանկութիւնն ու հանգստութիւնն, և հէնց հեղութիւնն է, որ մարդուն երջանիկ է անում գոնէ մի փոքրիկ շրջանի մէջ: Աւանտ-

¹ Ս. Շնորհալի, անդ. էջ 12.

րոյ և Քրիստոս ասում է. «ուսարուք յինէն» զի հեղեմ և խոնարհ սրտիւ և գտնիք հանգիստ անձանց ձերոց» (Մատթ. ԺԱ. 29):

Հեղութիւնը մի ժայռ է, որին զարնուելով մարդկային կրքերի մեծամեծ ալիքները, փշրւում են և ցրւում: Այդպիսի ալիքների մէջ ենք ապրում, ուստի և դոցա դիմաց անշարժ մնալու համար, պէտք ունինք այդ առաքինութեան: Հեղը՝ սէր է պահում ամենքի հետ՝ ոչ թէ ճշմարտութիւնը զոհելով և կամ ստուլթիւնը փաղաքշելով, այլ համբերելով և սիրոյ ճանապարհն ընտրելով: Գորանով ոչ թէ քաջալերւում են ստուլթիւնն ու խաբէութիւնն, որոնց խորտակելու համար՝ իբր թէ պէտք կայ խռովութեան. այլ հեղութեամբ է, որ խորտակւում են մեծագոյն չարիքներն և յաղթւում են անզգալի կերպով քաղաքաւարի չարագործները:

Ահա ուրեմն հեզն է, որ խռովութիւն չէ յարուցանում և ժառանգում է երկիրը, մինչդեռ «խռովարարն՝ և ի սեփական հայրենեացն զրկի»¹: Այլ և աւետարանի աւետիքները պէտք է վայելէ հեզն, որ իջեցնում է ոչ միայն իւր, այլ և այլոց բարկութիւնն, որ այնքան չարաչար մեղքերի սկզբնաղբիւր է լինում միշտ: Հեղութիւնը հետեւաբար բարիք է ոչ միայն մարդուս անձին, այլ և ուրիշների համար մի մեծ բարերարութիւն է: Ակներեւ է որ հեղութիւնն՝ երջանկութիւն է մարդու համար, ոչ միայն այստեղ, այլ և հանդերձեալում, որովհետեւ հեղութիւնը խորտակում է մարդու անհամբերութիւնն ու յուսահատութիւնը: Նա զօրացնում է մարդու սէրը դէպի Աստուած և դէպի մարդիկ, ամրացնում է մարդու յոյսը հանդերձեալ երանութեան նկատմամբ և յառաջ է մղում հաւատքով գործելու:

Ուստի և «ժառանգեցեն զերկիր» — կարող ենք հասկանալ թէ այս երկիրն, որ արդարութեամբ պէտք է ժառանգել և վայելել իբրեւ աստուածային բարիք, և թէ «կենդանեաց երկիրն», որ լիքն է ամենայն երանութեամբ: Այդպէս է ասում և Ս.

¹ Շնորհալի, անդ. էջ 92.

Գրիգոր Լուսաւորիչ¹ . «Շնորհօք հեղութեամբն բնակել յերկրի և յուսով ակն ունել մշտնջենաւոր անփոփոխ անխախտան կենսատու երանութեանցն»:

«Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեցին»:

Կարող ենք աղքատ լինել հոգով, այլ և սգաւոր ու հեզ, սակայն այդ ամենը դեռ բաւական չէ մարդուս բեղմնաւոր անգաստան գարձնելու համար աստուածային կենդանարար խօսքերի: Աղքատութեամբ, սգաւորութեամբ և հեղութեամբ զգում է մարդ իւր անդերի կարօտեալ վիճակը, սակայն մի նոր վիճակ է հարկաւոր, որպէս զի օրըստօրէ յագեցնան և բեղմնաւորուին, սնուցանուին և աճեն: Այդ է շեշտում Քրիստոս իւր չորրորդ երանութեամբ:

Հոգեւոր և մարմնաւոր է մարդ, հոգեւորութեան և մարմնաւորութեան եղանակն ունին և նորա կեանքի բոլոր գործունէութիւնները: Մարմինն եթէ չենք տալիս կերակուր, նա չէ դիմանում, նոյնպէս և հոգին՝ նուազում և կորցնում է իւր վառ-վռուն գործունէութիւնն, եթէ զրկում ենք նորան իւր կերակրից: Բայց լինում է ժամանակ, որ մարմինն ևս կերակուր չէ ուզում, ստամոքսը յագուրդ է զգում, մինչդեռ ոչինչ չէ ընդունել. այդ ծանր ժամեր են, երբ դառնութեան մաղձով բռնուած է մարդ: Ահա հասնում է բժիշկը, տալիս է մաղձաթափ գեղեր, մաքրում է ներսն և ապա բացում է գիւրեկան ախորժակն և սկսում է մարդ ուտել վայելչապէս:

Որչափ առաւել զգալի է այս մեր հոգու նկատմամբ, որ եթէ

¹ Անդ. էջ 90: Տես և հեղութեան գովեստը: էջ 108—112: «Հեղութիւն փառք ծերոց, որ նովաւ են հրահանգեալ յուղղախոհութիւն և յամենայն առաքինութիւնս: Հեղութիւն պատիւ երիտասարդաց, որ նովաւ յաղթեցին ամենայն հակառակաց, ստահակաց և անիրաւաց խոնարհութեամբ և քաղցրութեամբ»:

մեղքերի ախտերով բռնուած է, չէ փափագում սնունդի, նա ծուղակի մէջ է և ճաշակի զարգացումն չունի: Այստեղ ևս դեղ է պէտք, որպէս զի միտքը ժայթքէ այդ թունաբեր և թունալի ախտերը, թոթափէ մեղքերի որոգայթիչ ծուղակն և ապա ազատուելով՝ զարգանայ, ախորժակի գայ և ճաշակ ստանայ այն հոգեւոր կերակուրների, որոնք միայն յագուրդ և լիացումն են տալիս հոգուն¹: Այդտեղ է միայն երեւան գալիս այն քաղցն ու ծարաւն, որոնց մասին է Տիրոջ երանութիւնն: Նա երանում է նորան, որ ունի «սով լսելոյ զբան Տեառն»²: Սակայն ոչ միայն քաղց պէտք է ունենալ, այլ և ախորժակ և ճաշակ: Այն ժամանակ կ'յագեցնայ և սաղմոսերգուի հետ կասէ. «յագեցոյց զանձինս քաղցեալս, և զանձինս կարօտեալս լի արար բարութեամբ»³:

Իսկ արդարութեան քաղցածը՝ կստանայ այն կերակուրն, որ նոյն իսկ Քրիստոս էլ ուտում էր, այն՝ որի մասին ասում է. «Իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա»⁴: Եւ ճշմարիտ՝ իրականացնել Աստուծոյ կամքն և կատարել Նորա գործն—այնքան բազմաբովանդակ է, որի յագեցրածն երբէք չի քաղցիլ: Իսկ ճշմարիտ ծարաւի համար է, որ Քրիստոս պատրաստականութիւն է յայտնում զովարար ջուր տալու. «Չուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս»⁵: Այսպիսեաց համար պէտք է լինին մեր քաղցն ու ծարաւը՝ մաքուր և ազատուած՝ մեր ախորժակն և ճաշակը խառնող թոյներից: Քրիստոս ինքն է հացն կենաց և ջուրն կենդանութեան, մենք միայն պէտք է գիտենանք քաղցիլ և ծարաւել, որպէս զի կարենանք ախորժակ ձեռք բերել դոքա՝ այսինքն Նորա մարմինն և արիւնը, նորա կենդանի խօսքն ու ներգործութիւնը վաշելու և փրկուելու համար:

¹ Տես, Հնորհալի. անդ. էջ 93: ² Ամովս. Ը. 11: ³ Սաղմ. ԺԶ, 9: ⁴ Յով. Դ. 32: ⁵ Յով. Դ. 14:

«Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»:

Ողորմածութիւնն արդէն տանում է մեզ դէպի Աստուած, վասն զի այդ այնպիսի մի առաքինութիւն է, որով միայն կարողանում ենք նմանել Աստուծոյ: Ողորմած է միայն Աստուած և նա իւր ողորմութիւնն անընդհատ բաշխում է մեզ, և ինչպէս նա անում է այդ միշտ և հանապազ, այնպէս էլ կամենում է, որ մենք էլ ողորմած լինինք դէպի իւր որդիք, յիշելով միշտ թէ «բազմագութ է Տէր և ողորմած»¹ և եթէ մենք էլ ողորմած ենք, նմանում ենք Աստուծոյ:

Այլ ողորմածութիւն չէ, եթէ մարդ ուզում է իսկոյն իւր արածի փոխարէնն ստանալ, ողորմութիւնը պէտք է տրուի միայն իբրև ողորմութիւն կամաւորապէս և ողորմութիւն գաղափարի բարձրութեան պատճառով: Սակայն ողորմութիւնը միմիայն նուիրատուութիւն չէ, այլ ամենայն ցաւակցութիւն, որով մխիթարութիւն ենք պատճառում կարօտեալին և չքաւորին, սգաւորին և տնանկին: «Սիրոյ է ողորմութիւն, և ի սիրոյն պտուղ ներգործի ողորմութիւն»². սէրն է որ ողորմածութիւն է վառում և այդպէս մօտենում ենք դէպի քաղցր զգացմունքի կարօտողին: Երբեմն մի քաղցր խօսք առաւել մեծ բարիք է մարդու համար, եթէ ճշմարիտ զգացմունքներից է ծագում, քան այլ և այլ նիւթական օգնութիւններ:

Որչափ էլ ապահով լինի մարդ զանազան բարիքներով, այնով հանգերձ կարօտ է որ և իցէ կերպով ուրիշ ողորմածութեան. այդ կարօտութեան ընդհանուր լինելն է, որ ամենքին կարօտ է դարձնում Աստուծոյ ողորմութեան: Նոյն իսկ մարդիկ իւրեանց ունեցածով իրար լրացնում են. մէկն ունի մէկ առաւելութիւն, միւսն այլ, որոնցով և իրար սիրով լրացնում են և ողորմում: Իսկ ամենքի կարօտութեան նայում է գթութեամբ ամենքի Հայրն, իւր ողորմութիւնից մասն ու բաժին հանում իւրաքանչիւրին:

¹ Յակ. Ե. 11.

² Ս. Ն. Շնորհալի, անդ, էջ. 95.

Սակայն ողորմածութիւն ունենալով դէպի այլք, դեռ դորանով չէ լրանում ճշմարիտ ողորմածութիւնը: Մարդ ունի և պարտիք դէպի ինքն, ուստի ողորմածութիւն պէտք է ունենայ դէպի իւր հոգին, մանաւանդ եթէ ախտերի և մեղքերի մէջ սուղուած է, նաև կարօտ է վշտակցութեան և օգնութեան: Ոյժ տալով միայն մեր մարմնին, կարօտութեան մէջ ձգած կլինինք մեր հոգուն, որով և դրժած կլինինք ողորմածութեան գաղափարին և աստուածանմանութեան: Այս երկսայրի ողորմածութիւնն է, որ մեզ մերձեցնում է Աստուծոյ և այդպիսով Նորանից կարողանում ենք ճշմարիտ ողորմութիւն գտնել:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»:

Այս ողորմութիւնն, որ պէտք է գտնենք Աստուածանից, իւր գագաթնակէտն է ստանում աստուածտեսութեան մէջ: «Սուրբ սրտիւք» կամ «ուղիղ սրտիւք»¹ այն հոգեկան վիճակն է, որ տրամադիր է դէպի ամենայն առաքինութիւն, ուրեմն այդ ևս պէտք է տանէ մեզ դէպի բարձրագոյն բարիք: Գիտենք որ արքայի երեսին նայելը՝ հպատակի ամենաբարձր ուրախութիւնն է, ըստ այնմ թէ՛ «Երանելի են կանայք քո և երանելի ծառայք քո, որ կան առաջի քո . . . »²: Նոյնն է և Աստուծոյ նկատմամբ, որպէս երգւում է սաղմոսի մէջ. «Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց, յագեցայց յերևիլ փառաց քոց»³:

Սուրբ սիրտը, մաքրուած լինելով ամենայն ախտերից և չար խորհրդներից, տեսնում է Աստուծոյ փառքը մտաւոր աչքերով և կարողանում է չորեք չայելի տեսանել իմանալեօքն զիմանալի աստուածութեանն զլոյս»⁴: Մտաւոր աչքով և կամ հոգով տեսնելով Աստուած, որ մարմնաւոր աչաց անտեսանելի է, մտնում ենք Նորա հետ սերտ յարաբերութեան մէջ, ստա-

¹ Սաղմ. Էբ. 1. 2 Գ. Թագ. Ժ. 8. 3 Սաղմ. ԺԶ. 15.

⁴ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախ. էջ 92. (ուղղուած ըստ գրչագրաց):

նումենք Նորանից շնորհներ, բացումեն մեր տեսութիւններն և մենք կարողանումենք Նորա աստուածային շողերի ներգործութեան տակ մեր դերը կատարել: Քանի վսեմէ այս յարաբերութիւնն, այնքան բարձր բարիք է նորա համար, որ կեանքով յաջողել է սրբել և ուղղել իւր սիրտն և դարձնել աստուածային բնակարան: Այնուհետև նորա համար մեղսական ոչինչ գոյութիւն չունի, վասն զի Աստուած է նորա խորհրդների մէջ և Աստուած է նորան առաջնորդողն և դէպի իւր երանութիւնը տանողը:

Սակայն որքան փափագելի է տեսնել Աստուած, այնքան պէտք է մաքրել, սրբել մեր խորհրդները կամ սրտերը:

«Երանի խաղաղարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Ողորմութեան մի մեծ գործն է խաղաղարար լինել, հաշտեցնել երկու թշնամի կողմեր, ըստորում և խաղաղարարութեան կատարելատիպ է Քրիստոս, որ «արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս»¹: «Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի, և զմիջնորմն ցանկոյն քակեաց զթշնամութիւն ի մարմնի իւրում»²: Քրիստոս հաշտեցրեց մարդկութիւնը Աստուծոյ հետ, որից օտարացել էինք մեղսագործութեամբ: Նա մեզ բարձրացրեց մեր անկեալ վիճակից և դրաւ վերստին մեր վիճակի մէջ, ուրեմն կարող ենք ձգտիլ աստուածամանութեան: Ինչպէս Ինքն է, «նոյնպէս և մեզ տսէ լինել խաղաղարար, զի եղբարք նորա լիցուք . . . »³: Այսքան մեծ պատուի է հանդիպեցնում մեզ:

Խաղաղ գրութեան մէջ էր և մարդ իւր սկզբնական վիճակում, սակայն լսելով խռովարար օձի ձայնը, բորբոքուեց խռովութեամբ այնքան, մինչ կարօտեց Քրիստոսի խաղաղութեան շնորհաց: Հետեւելով Քրիստոսի գործին՝ կարելի է դարձեալ խաղաղութեան:

Թեան մէջ ընկնել և Աստուծոյ որդի լինել: Սակայն խաղաղութիւն պէտք է նախ սեփական անձի մէջ հաստատել, վասն զի նա որ ինքն իւր մէջ խաղաղ չէ, անկարող կլինի խաղաղարար լինել այլոց: Իսկ ինքեան խաղաղարար լինել կարելի է, հաշտեցնելով մեր հոգին և մարմինն իրար հետ, որոնց պառակտելով է ընկել մարդ մարմնական ախտերի մէջ: Այնպէս որ հոգին պէտք է տիրէ մարմնի վրայ և հոգու կամքը գերիշխող դառնայ: Կարճ ենք յիշում այս ներքին խաղաղութիւնը, սակայն ամենագիտար գործն է: Բախտաւոր է մարդ, եթէ յաջողուել է նորան խաղաղութիւն հաստատել իւր մէջ և ազատուել պառակտման կռուից, նորա կեանքը հանգիստ կլինի և գործն ընթացիկ: Եւ ահա այդպիսին միայն կկարենայ խաղաղութեան հեղինակ լինել և իւր ընկերների, իւր շրջապատողների մէջ: Բայց այլոց հետ ևս մարդ նախ ինքը պէտք է խաղաղութիւն պահէ և ապա այլոց իրար հետ խաղաղեցնէ: Իսկ այդ խաղաղութեան մէջ սէրն է հիմնաքար, որ ամեն բարի յարաբերութեան յորդորիչն է: Վայ նորան, որ իւր կերպարանքով միայն ատելութիւն է շարժում և երբէք չի կարող սիրոյ անգրադարձ լինել: Պէտք է առատ լինել սիրոյ շողերով, սակայն անհրաժեշտ է և ցուրտ ընդունակ լինել: Սիրել կարելի է և պէտք է, բայց և սէրն ընդունելն ու փոխարինելն անհրաժեշտ է: Երկուսն էլ խաղաղութեան հիմնաքար են և միայն այդպէս կարելի է Քրիստոսի նմանել և խաղաղարար լինել: Օրինակ է մեզ Աստուած, որ ծագում է արեգակնային շողերը թէ արդարների և թէ մեղաւորների վրայ, և թէ գթութեամբ ընդունում է ամենքի դիմումներն ու սիրոյ ցոյցերը:

«Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից»:

Խաղաղութիւնից զրկում և հալածում են երկու տեսակ մարդիկ—մէկ բարի և մէկ չար: չարերը հալածում են չարութեան, ուրիշին արած վատութեան համար, սակայն Աստուծոյ

որդիք, որոնք քաղցում և ծարաւում են արգարութեան համար, հալածում են միայն նախանձ գրգռելով փառարասէր մարդկանց, մէջ: Նոյն ինքն Քրիստոս, մարդկութեան Փրկիչը հալածուեց ոչ միայն ամբարիշտներից, այլև նոցանից, որոնք կուրութեամբ իւրեանց օգուտը չէին կարենում տեսնել Քրիստոսի արածներից և խօսածներից: Ուստի և Քրիստոս ասաց իւր աշակերտներին թէ՝ «դիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն»:

Չարն է հալածում նոցա, հասկանալի է ուրեմն որ չարից փախչելով դէպի բարին պէտք է երթան: Չարի հալածանքն ունի և իւր բարերար ազդեցութիւնն այնպէս, ինչպէս որ դառն դեղը խմում ենք և կծու ցաւերն ամոքում, ըստ որում և թըշնամու հալածանքը շիջուցանում է մեր մէջ շատ ախտերի վառուածքներն, այլ և առիթ է լինում մեր անձի որպիսութեան վրայ նայելու, մեր պակասութիւններն որոշելու, կարծելով թէ ճշմարիտ մեր պակասութեանց համար են մեզ հալածում: Ահա այդպէս ուշադրութիւն դարձնելով մեր անձի վրայ, ձգտում ենք մեր թերութիւնները լրացնել, աւելի կատարելագործուել և ապա հանգիստ սրտով հալածանք կրել, քաջ գիտենալով որ այդ հալածանքը մեր արժանեաց համար է և թէ մարգիկ չար նախանձից կուրացած են գործում: Հալածանքը փորձաքար էլ է. ունենալ մի առաւելութիւն դեռ բաւական չէ, պէտք է նաև պահել այդ բայց գորա համար պէտք է համոզուած լինել որ իրաւ այդ անկորուսանելի առաւելութիւն է, որի համար արժէ և նեղութիւն քաշել: Եւ ահա երբ հալածում են, մենք աւելի և աւելի ենք համոզուում, թէ այդ առաւելութիւնը մեր հարստութիւնն է և այլք նախանձում են մեզ հէնց գորա համար, այն ժամանակ մենք թէ պինդ ենք պահում այդ և թէ ձրգտում ենք հարստացնել: Իսկ այդ հալածանքի մէջ մեր առաւելութիւնը մաքրում զուռում են իբրև միտալը վառ բոլի մէջ:

Ահաւասիկ այդպիսի մաքրիչ, համոզմունք զարթեցնող և հաստատամտութեան վարժեցնող հալածանքն է, որ արժանի է կացնում մեզ Աստուծոյ արքայութեան: «Մաղիկ արքայութեանն պտղոյ՝ նեղութիւնն է, եթէ կամի՛ք զպտուղն կթել՝ նախ զծա-

ղիկն հաւաքեսցուք»¹: Եթէ այդպէս չլինէր, մենք չէինք գիտենալ թէ այն օր մեր առաւելութեան համար է, որ արքայութիւն ենք ժառանգում, միթէ իրաւ արժանի ենք, երբ գիտենք որ եթէ մի նեղութեան մէջ ընկնէինք, ո՞վ գիտէ՝ չէինք կսրցնիլ մեր առաւելութիւնը:

Արդ մեր առաւելութիւնք ինչ նպատակի համար էլ լինին, պէտք է փորձուին և ամրաման. մեզ անհրաժեշտ է յեղիեղուկ կեանք, որպէս զի կեանքի սրոյը սրէ՝ մեր լաւ կողմերն, մաքրէ աւելորդ ժանգերից և կտրուկ դարձնէ ամեն բարութեան:

«Երանի է ձեզ՝ յորժամ նախախցին զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան շար զձէնջ սուտ վաս իմ»:

Հալածանքն և նախատիւնն առաւել նշանակութիւն ունին առաքելոց և քարոզչաց համար, վասն զի լռելով և գիտենալով թշնամու անարդարութիւնն, աւելի ևս կշանան տարածել կենաց խօսքն, որպէս զի պակասի թշնամեաց թիւը: Նոցա հալածողներն և նախատողները նմանում են հիւանդ երեխաների, որոնց դեղ ես տալիս, մանաւանդ փոքր ինչ դառն դեղ, խփում են, հայհոյում են և դժգոհում սակայն և այնպէս կամայ թէ ակամայ խմում են բուժիչ գեղն և ապա բժշկուելով, օրհնում են և գոհանում: Հարկաւ առաքեալք իբրև դեղ տուողներ, չպէտքէ հայհոյանքից յուսահատուէին, դժկամակէին երեխայոց ապաշնորհութեան համար և հեռանային, թողնելով նոցա ծանր հիւանդութեան մէջ: Այդ է պատճառն, որ Քրիստոսի աշակերտն աւելի մեծ օգուտներ է տալիս, քան այլ ոք: Քրիստոսի ճշմարիտ աշակերտը չի նեղանալ հիւանդի հայհոյանքներից և հեռանալ, ինչպէս անում են այլք սովորաբար, այլ համբերատար կլինի և կշարունակէ իւր գործը, վասն զի նորա բախտաւորութիւնը հոգի փրկելն է և ոչ թէ անձնական պատիւն, որ այդպէս ձեռք

¹ Ընթերցալի. անդ. 99.

բերուելով իսկապէս պատիւ էլ չէ։ Այդպէս հետեւում էին առաքեալք Քրիստոսի խօրին, ինչպէս ասում է Պօղոս. «Եւ աշխատեցաք ձեռք մերովք. բամբաս! ինչ զմեզ, օրհնէաք. հալածէին, յանձն առնուաք. հայհոյէին, աղաչէաք. իբրեւ տաակ նշաւակի եղեսաք ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի լինել մինչեւ այժմ¹»։

Սակայն պէտք է ջանալ, որ ամբոխի բամբասանքի մէջ ճշմարտութիւն չլինի, ապա թէ ոչ՝ սուտն էլ ճշմարտութեան տեղ կրնի թանայ, վասնորոյ և Քրիստոս ասում է. «Կոպ վասն իմ»։ Ուրեմն բամբասանքը պէտք է լինի նախ Քրիստոսի համար և երկրորդ՝ սուտ. այն ժամանակ պարզ է, որ Քրիստոսի ճշմարտութիւնը յառաջ տանելուն դէմ հալածանք և բամբասանք են հնարում վնասելու դիտմամբ²։ Քրիստոսին հետ, ունի իւր գործը յառաջ կտանէ, իսկ «վայն է վճիռ, յոյր ձեռն գայցէ գալթագղութիւնն³»։ Հասկանալի է, որ հալածողն ու բամբասողը չեն կարող վնասել Աստուծոյ գործը, սակայն գալթագղութիւն կպատճառեն տկարներին։

«Յնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկնս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին»։

Ուրեմն քանի որ աշխարհում հալածանքն և բամբասանքն ոչինչ բաներ են ճշմարիտ հաւատացողի և Քրիստոսի հաւատարիմ հետեւողի առաջ, մնում է նոցա հնծալ և ուրախ լինել այն փառաւոր պսակի համար, որ պատրաստուած է հանգերձեալ կեանքում։ Որչափ աշխարհի նախատինքները տրոմուլթիւն

1 Պօղոթ. Դ, 12.

2 Տես. և ես. ԾԱ. 7. «Մի երկնչիք ի նախատանաց մարգկան, և բամբասանք նոցա զձեզ յամօթ մի արասցեն. զի իբրեւ ձորձք ընդ ժամանակաւ մաշեցին, և իբրեւ զսար որ ուտիցի ի ցեցոյ, բայց արգարութիւն իմ յաւիտեան կացցէ, և փրկութիւն իմ ազգաց յազգս»։

3 Անորհալի, անդ 99.

շարժեն, որքան թախիժ բերեն մարդկանց շնորհապարտութիւնք, այնքան մեծ պէտք է լինի ուրուխութիւնն ու ցնծութիւնը, մանաւանդ ի նկատի ունենալով որ մարդիկ յաճախ վիշտ են պատճառում իսկապէս չհասկանալով, չըմբռնելով Քրիստոսի հետեւողի բարութիւնն ու բարի ներգործութիւնը։ Հալածանք ու նախատինքը ախրութիւն կբերեն, բայց հետեւողք ուրախ պէտք է լինին և ցնծան միշտ ի նկատի ունենալով և այն լաւ հետեւանքներն, որոնք իրականանում են գործի յաջողութիւնից։ Ամենից ծանր է բամբասանքն և չարախօսութիւնը. հալածանքը, և չարչարանքը տանելի են, մինչդեռ բամբասանքն ու չարախօսութիւնն անտանելի են, ըստ որում գիտենք որ Յովք ամեն չարչարանք կրեց լուութեամբ, սակայն բարեկամաց նախատինքը զայրացրեց նորան։ Ուստի և այդ անչափ և անսահման նեղութեանց համար վարձքն ևս բազում պէտք է լինի երկնքում։ Վասն զի այդ դէպքում փորձանքի բովն արդէն իւր կատարեալ բոցավառութեան մէջ է և պանծալի է յաղթողի գործունէութեան յաղթանակը։ Անկատարութեան նշան է հալածանքից և բամբասանքից խռովուիլը, վասն զի այդ նշանակում է՝ այնքան թոյլ և անհաստատամիտ լինիլ, որ մինչև անգամ մի վայրահոյ բամբասանք կարողանայ փոխել մարդու ընթացքն և կամ վտանգել։ Այլ եթէ առաւել ևս զօրանայ մարդու գործունէութիւնն այդ ալիքների մէջ, նա է որ ճշմարտապէս կ'յաղթանակէ և առաւել մեծամեծ արդիւնքներ կունենայ։ Քրիստոս օրինակ է բերում մարգարէներին, որոնք թէև ամենայն զրկանքներ կրում էին ճշմարտութիւնը ժողովրդի մէջ տարածելու և մուրորութիւնից նորան դարձնելու համար, այնով հանգերձ սոսկալի հալածանքների և չարախօսութեանց էին ենթարկուում։

Սորանով փակում է Քրիստոս իւր ինն երանութիւնք, որոնք մի գեղեցիկ շարք են կազմում շղթայաբար, ով որ աղքատ է հոգով, սուգ է անում իւր մեղքերի վրայ, ով որ սգաւոր է, նաև հեզ է, և նա որ հեզ է, արդար և ողորմած է. նա որ արգար և սուրբ է, անշուշտ խաղաղարար է. ըստ որում խաղաղարարը չէ հակառակում հալածանքներին և չէ խռովում բամբասանք.

ներից. իսկ այդպիսին ամենամեծ յաղթանակը կտանէ թէ այս-
տեղ և թէ հանդերձեալ կեանքումս վարձքի և պսակի պարժա-
նանայ երկնաւոր Հօրից, որ գիտէ սիրել իւր ճշմարիտ գործա-
կիցներին:

Արդ՝ մի՞թէ քաղցր և անոյշ չէ գործակից լինել Քրիստոսի:





1789

004652

<< Ազգային գրադարան



NL0027652

